ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 18 սեպտեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատական կազմը

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյան
Անդամներ՝ Կ. Բալայան
Վ. Հովհաննիսյան

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Գագիկ Չանգլյանի՝ 2009 թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը քննության ընդունելու հարցը

Պ Ա Ր Զ Ե Տ

- Քաղաքացի Գ. Չանգլյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394 հոդվածի 1-րդ մասի 2-րդ կետի, 399 հոդվածի եւ 414.1 հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Դիմողը նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող նորմերի գործողության արդյունքում ստեղծվում են իրավիճակներ, երբ անձը զրկվում է իր նկատմամբ կայացված դատավճիռը բողոքարկելու սահմանադրական իրավունքն իրականացնելու հնարավորությունից:
- Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 09.09.2009թ: Վերջնական դատական ակտը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԲ-06/09 որոշումը կայացվել է 2009թ. մարտի 6-ին:
- Առկա է պետական տուրքի վճարման անդորրագիրը:
- Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69

հոդվածների պահանջներով՝ գտնում ենք, որ դիմումի քննությունը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 414.1 հոդվածի 1-ին մասի վերաբերյալ դիմողը 04.09.2009թ. արդեն իսկ դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան, որոնց քննության ընդունելու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը 18.09.2009թ. կայացրել է համապատասխան որոշում:
- Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 399 հոդվածին, ապա գտնում ենք, որ դիմումը չի պարունակում տվյալ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ, ինչը հիմք է դիմումի քննությունը մերժելու համար, քանի որ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 4-րդ մասի՝ անհատական դիմումը...պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, 69 հոդվածի 4-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394 հոդվածի 1-րդ մասի 2-րդ կետի, 399 հոդվածի եւ 414.1 հոդվածի 1-ին մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ Գ. Չանգլյանի դիմումի քննության ընդունումը մերժել:
2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատական կազմի որոշումն ընդունվել է ՀՀ սահմանադրական դատարանի անունից:

Նախագահող՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Անդամներ՝ Կ. ԲԱԼԱՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍԴԴԿՈ-

18 սեպտեմբերի 2009 թ.